

Թիւ 25794

~~Ապրիլ 30~~, 1978

Դ-ՆԻ-18

Արժանաշնորհ

Տ. Տիրան Քհնյ. Փափագեան

Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ

Նախագահ Ժխական Խորհուրդի

Գլխավէնա.

Սիրելի Տէր Տիրան,

Այսօր ուրախութեան եւ ցնծութեան մէջ է Գլխավէնտի Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ համայնքը, որովհետեւ համեմատաբար կարճ ժամանակի մը ընթացքին, շնորհիւ հոգեւոր հովիւներու, ծխական խորհուրդներու, Շինութեան Ցանձնախումբի եւ եկեղեցական կազմակերպութեանց բոլոր անդամներու տքնաջան աշխատանքին, եւ բարոյական ու նիւթական գոհողութիւններուն, կրցաւ իրաւատէրը ըլլալ Եկեղեցւոյ եւ յարակից մշակութային շէնքի հողամասին: Եւ պատմական հանդիսութեամբ այսօր պիտի կատարուի պարտամուրհակի կիզումը:

Կը ցաւինք որ ձեզի հետ թենք այսօր, սակայն վստահ կըրնաք ըլլալ որ կը բաժնենք ձեր անխառն ուրախութիւնը, յաջողութիւնը եւ հպարտութիւնը: Եւ երբ յետադարձ ակնարկով հաշուեյարդար մը պիտի կատարէք ձեր անցեալի արդիւնաւոր գործունէութեան եւ իրագործումներուն, պէտք չէ մոռնալ որ նոյն ատեն պարտիք մշակել նոր ծրագիրներ ու յայտագիրներ՝ սկըսած գործը շարունակելու համար աւելի եռանդով ու պարտակա-նութեան գիտակցութեամբ:

Աստուծոյ Տունի մը եւ մշակութային հիմնարկի մը տէր
ըլլալով հանդերձ՝ պէտք է աշխատիլ այդ Տան եւ հիմնարկին
դռները միշտ բաց եւ զանոնք հաւատացեալներովն լի պահել՝
քոլորին փոխանցելու համար մեր Տիրոջ կենսատու պատգամը
եւ մեր ազգային փառաւոր աւանդութիւնները:

Նոր հանգրուանի մը սեմին՝ պարտինք ուխտել շարունա-
կելու սկսուած այս բարի գործը՝ Աստուծոյ փառքին եւ մեր
ժողովուրդի բարօրութեան համար:

Որպէս Առաջնորդ Ամերիկայի Հայոց, կը գնահատենք հա-
մայնքիդ հին ու նոր քոլոր անդամներուն կատարած անձնը-
ւէր գործը եւ յանձն առած գոհողութիւնները: Կ'օրհնենք
քոլորդ եւ ձեզի կը ցանկանք առաւել քաջաոողջութիւն եւ
յաջողութիւն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԷՆԳԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ